

BACCALAURÉAT TECHNOLOGIQUE

SESSION 2016

ARMÉNIEN

VENDREDI 17 JUIN 2016

LANGUE VIVANTE 1

Séries : **Hôtellerie, STI2D, STD2A, STL, ST2S** – Durée de l'épreuve : **2 heures** – coefficient **2**

Série **STMG** – Durée de l'épreuve : **2 heures** – coefficient **3**

Le candidat traitera, dans la langue étrangère, l'ensemble des questions de l'épreuve pour laquelle il compose.

L'usage des dictionnaires et des calculatrices électroniques est interdit.

Dès que ce sujet vous est remis, assurez-vous qu'il est complet.
Ce sujet comporte 7 pages numérotées de 1/7 à 7/7.

Répartition des points

Compréhension de l'écrit	10 points
Expression écrite	10 points

**2016թ. Հայաստանում եվրոպացի զբոսաշրջիկների համար Գորիսի
լեռներում արշավներ¹ կկազմակերպվեն**

17.02.2016

www.news.am

2016 թվականին եվրոպացի զբոսաշրջիկներին կծանոթացնեն Գորիսի շրջակայքի լեռնային արահետներին²: Այս մասին **NEWS.am**-ի թղթակցի³ հետ զրույցում հայտնեց Հայ զբոսավարների⁴ ասոցիացիայի նախագահ Լիա Բախշինյանը:

- 5 «Մենք նախկինում հիմնականում արշավներ էինք կազմակերպում դեպի Արագած: Սա շատ տարածված երթուղի⁵ է: Իսկ հիմա պատրաստվում ենք արշավների սիրահարներին ծանոթացնել Գորիսին: Արդեն հետիոտնի համար նախատեսված արահետներով երթուղիներ ենք կազմել, բայց դժվար ճանապարհներ են: Այդ պատճառով հարկավոր է պատրաստվել
- 10 զբոսաշրջիկների ժամանելուն», - նշեց Բախշինյանը:

- Հայաստանի լեռների բուսական արահետներն առայժմ եվրոպացիներին ավելի քիչ են գրավում, քան ավանդական շրջայցերը⁶, այդ պատճառով քիչ է նաև պրոֆեսիոնալ զբոսավար-ուղեկցորդների⁷ թիվը: Նրանք պետք է կարողանան վրաններ խփել (հաճախ արշավները մի քանի օր են տևում), խարույկ վառել,
- 15 ճանաչել ճանապարհները, անհրաժեշտության դեպքում առաջին օգնություն ցույց տալ: Եվ, իհարկե, պետք է իրենք էլ ուսապարկով ճամփորդության փորձ ունենան:

¹ Արշավ – randonnée

² Արահետ – sentier

³ Թղթակից – journaliste, correspondant

⁴ Չբոսավար - guide

⁵ Երթուղի – itinéraire

⁶ Շրջայց – tour

⁷ Ուղեկցորդ – accompagnateur

2008 թվականին USAID/CAPS⁸ ծրագրի շրջանակում մի քանի ուղեկցորդներ վերապատրաստում⁹ են անցել Փրանսիայում: Հիմա նրանք են պատրաստում սկսնակներին¹⁰:

«Այդ մասնագիտացմամբ կրթությունը թանկ հաճույք է, այդ պատճառով մեզ շատ կօգնեին նոր նախագծերը¹¹: Դա առանձին մասնագիտություն է, որը սովորում են տարիների ընթացքում: Այդ պատճառով, որպես կանոն, խմբի հետ ուղարկում ենք երկու զբոսավարի. մեկը՝ դասական զբոսավար, որը լեզու գիտի եւ ճանապարհին կարող է պատմել երկրի եւ շրջանի մասին, մյուսը՝ ուղեկցորդ», - պարզաբանեց Բախշինյանը:

Փրանսիայից, Նիդեռլանդներից, Իտալիայից, իսկ վերջին շրջանում՝ նաեւ Ռուսաստանից ժամանող զբոսաշրջիկները շատ են սիրում Հայաստանի լեռները:

30 «Արշավները կազմակերպում ենք հիմնականում ամռանը: Ձմռանը լեռներում մշուշ¹² է, հաճախ նաեւ կայծակ¹³ կա: Այդ պատճառով արշավները կազմակերպում ենք ամռանը, շատ քիչ՝ նաեւ գարնանն ու աշնան առաջին կեսին», - հավելեց Բախշինյանը:

⁸ USAID-CAPS - Agence des États-Unis pour le développement international – Compétitivité du secteur privé en Arménie

⁹ Վերապատրաստում – formation

¹⁰ Սկսնակ – débutant

¹¹ Նախագիծ – projet

¹² Մշուշ - brouillard

¹³ Կայծակ – orage

TRAVAIL À FAIRE PAR LE CANDIDAT

I. COMPRÉHENSION DE L'ÉCRIT (10 points)

1. Նախկինում դեպի ո՞ր լեռն էին արշավներ կազմակերպվում:
2. Ո՞րն է արշավների սիրահարների նոր երթուղին:
3. Որո՞նք են եվրոպացիների նախընտրած շրջայցերը:
4. Ի՞նչ պետք է կարողանան անել զբոսավար-ուղեկցորդները:
5. Որտե՞ղ են վերապատրաստում անցել զբոսավար-ուղեկցորդները:
6. Ո՞ր երկրներից են ժամանում զբոսաշրջիկները:

II. EXPRESSION ÉCRITE (10 points)

Afin de respecter l'anonymat de votre copie, vous ne devez pas signer votre composition, citer votre nom, celui d'un camarade ou celui de votre établissement.

Les candidats traitent une question au choix en 180 mots minimum.

1. Պատկերացրեք, որ լեռներում արշավ պետք է կատարեք: Պատմեք, թե ինչ եք անելու:
2. Լիա Բախշինյանը կարելորում է զբոսավարների վերապատրաստումը: Բացատրեք, թե ինչու է այն կարելու:

**2016-ին Հայաստան եւրոպացի զբօսաշրջիկներու համար Կորիսի
լեռներուն մէջ արշաւներ¹ պիտի կազմակերպուին**

17.02.2016

www.news.am

2016 թուականին եւրոպացի զբօսաշրջիկներուն պիտի ծանօթացնեն Կորիսի շրջակայքի լեռնային արահետներուն²: Այս մասին NEWS.am-ի թղթակիցին³ հետ զրոյցի ընթացքին արտայատուեցաւ Հայ զբօսավարներու⁴ ընկերակցութեան Նախագահ Լիա Բախշինեանը:

5 «Մենք անցեալին ընդհանրապէս դէպի Արագած արշաւներ կը կազմակերպէինք: Սա շատ տարածուած երթուղի⁵ է: Իսկ հիմա կը պատրաստուինք արշաւներու սիրահարներուն ծանօթացնել Կորիսը: Արդէն հետիոտնի⁶ համար Նախատեսուած արահետներով երթուղիներ կազմած ենք, բայց դժուար ճամբաներ են: Այդ պատճառով պէտք է
10 պատրաստուիլ զբօսաշրջիկներուն ժամանելուն», - նշեց Բախշինեանը:

Հայաստանի լեռներու բուսական արահետները առայժմ եւրոպացիները
աւելի քիչ կը գրաւեն, քան աւանդական շրջապտոյտները⁷, այդ
պատճառով քիչ է Նաեւ արհեստավարժ⁸ զբօսավար-ուղեկցորդներուն⁹
թիւը: Անոնք պէտք է կարենան վրաններ լարել (յաճախ արշաւները մի
15 քանի օր կը տեւեն), խարոյկ վառել, ճանչնալ ճամբաները,

1 արշաւ – randomé

2 արահետ – sentier

3 թղթակից – journaliste, correspondant

4 զբօսավար - guide

5 երթուղի – itinéraire

6 հետիոտն – à pied

7 շրջապտոյտ – tour

8 արհեստավարժ - professionnel

9 ուղեկցորդ – accompagnateur

անհրաժեշտութեան պարագային առաջին օգնութիւն ցոյց տալ: Եւ, անշուշտ, պետք է իրենք ալ ուսապարկով ճամբորդութեան փորձառութիւն ունենան:

2008 թուականին USAID/CAPS¹⁰ ծրագրի շրջանակին մէջ մի քանի 20 ուղեկցորդներ Ֆրանսա վերապատրաստման¹¹ մասնակցած են: Հիմա անոնք կը պատրաստեն սկսնակները¹²:

«Այդ մասնագիտացմամբ կրթութիւնը սուղ հաճոյք է, այդ պատճառով մեզի շատ պիտի օգնէին նոր նախագիծերը¹³: Այդ յատուկ մասնագիտութիւն է, որ կը սորվին տարիներուն ընթացքին: Այդ 25 պատճառով, որպէս կանոն, խումբին հետ կ'ուղարկենք երկու զբօսավար. մէկը՝ դասական զբօսավար, որ լեզու գիտէ եւ ճամբուն ընթացքին կրնայ պատմել երկրին եւ շրջանին մասին, միւսը՝ ուղեկցորդ», - պարզաբանեց Բախշինեանը:

Ֆրանսայէն, Հոլանտէն, Իտալիայէն, իսկ վերջին շրջանին՝ նաեւ 30 Ռուսաստանէն ժամանող զբօսաշրջիկները շատ կը սիրեն Հայաստանի լեռները:

«Արշաւները կը կազմակերպենք ընդհանրապէս ամառը: Ձմեռը լեռներուն մէջ մշուշ¹⁴ է, յաճախ նաեւ կայծակ¹⁵ կայ: Այդ պատճառով արշաւները կը կազմակերպենք ամառը, շատ քիչ՝ նաեւ գարնան ու 35 աշնան առաջին կեսին», - ակելցուց Բախշինյան:

10 USAID-CAPS - Agence des États-Unis pour le développement international – Compétitivité du secteur privé en Arménie

11 վերապատրաստում – formation

12 սկսնակ – débutant

13 նախագիծ – projet

14 մշուշ - brouillard

15 կայծակ – foudre

TRAVAIL À FAIRE PAR LE CANDIDAT

I. COMPRÉHENSION DE L'ÉCRIT (10 points)

1. Անցեալին դէպի ո՞ր լեռը արշաւներ կը կազմակերպուէին:
2. Ո՞րն է արշաւներու սիրահարներուն նոր երթուղին:
3. Որո՞նք են եւրոպացիներուն նախընտրած շրջապտոյտները:
4. Ի՞նչ պէտք է կարենան ընել զբօսավար-ուղեկցորդները:
5. Վերապատրաստման ո՞ր մասնակցած են զբօսավար-ուղեկցորդները:
6. Ո՞ր երկիրներէն կը ժամանեն զբօսաշրջիկները:

II. EXPRESSION ÉCRITE (10 points)

Afin de respecter l'anonymat de votre copie, vous ne devez pas signer votre composition, citer votre nom, celui d'un camarade ou celui de votre établissement.

Les candidats traitent une question au choix en 180 mots minimum.

1. Երեւակայեցէք թէ ո՞ր լեռներուն մէջ արշաւի պիտի երթաք:
Պատմեցէ՛ք թէ ի՞նչ պիտի ընէք:
2. Լիա Բախշինեանը կարելորութիւն կու տայ զբօսավարներու վերապատրաստման: Բացատրեցէ՛ք, թէ ինչու կարելոր է: